թէ՛ տաճիկ, թէ՛ պարսիկ։ Բազմաթիւ ու բազմատեսակ հարկերի ու տուրքերի, ինչպէս նաեւ կաշառքի ու նուէրների, թալանի ու հարստահարութիւնների մասին խօսելն աւելորդ է։ Դրանք միշտ էլ սովորական երեւոյթների շարքում են եղել ե՛ւ Տաճկաստանում, ե՛ւ Պարսկաստանում։

Էջմիածնի դրութիւնը, այդ տեսակէտից, մի պերճախօս ապացոյց է ընդհանուր պատկերի։

Հարկերի ու հարստահարութիւնների շնորհիւ Էջմիածինը հասել էր մի այնպիսի դրութեան, որ կաթողիկոսները օր ու դիշեր հանգիստ չունէին, մտածում էին հնարներ գտնել պարտքից ազատուելու համար։ Միաժամանակ երկու կամ երեք կաթողիկոս ունենալը արդէն սովորութիւն էր դարձել։ Օգնական կամ ընկերակից ունենալու նպատակով՝ կաթողիկոսները յաճախ ձեռնադրում էին մէկ երկրորդին, մէկ երրորդին, որպէսզի կամ իրենց օձիքն ազատեն պետութեան ու պարտատէրերի ձեռքից եւ կամ 2–3 հոգով աշխատեն, 2–3 հոգով շրջագայեն եւ փող հաւաքեն։

Այսպէս, Ստեփաննոս Սալմաստեցին կաթողիկոս ձեռնադրեց Միքայէլ Սեբաստացուն եւ ինքը հեռացաւ Պոլիս։ Դաւիթ Էջմիածնեցին ձեռնադրեց Մելքիսէթին, բայց տեսնելով, որ երկու հոգով էլ չեն կարողանում Էջմիածնի պարտքը վճարել, ձեռնադրեցին նաեւ երրորդին, Սրապիոն Ուռհայեցուն, որ կաթողիկոս նստեց Գրիգոր ԺԳ անունով։

Կաթողիկոսները աւելի շատ մի տեսակ պետական հարկահաւաքներ էին, քան կաթողիկոսներ։ Պարտատէրերի դուռների հետ միասին — լինին այդ պարտատէրերը պետութիւնը թէ մասնաւոր մահմեդական անձնաւորութիւններ — նրանք շարունակ շրջում էին դիւղից-դիւղ, քաղաքից-քաղաք, դրամ էին մուրում, տալիս էին պարտքը, բայց դարձեալ չէին ազատւում։ Ճաճախ հարկադրուած՝ դիմում էին խայտառակ միջոցների — դրամ կորզելու համար։ անարժան ձեռնադրութիւններ էին անում, այս ինչ վանքի վիճակը կաշառքով կորում եւ միւսին էին տալիս, բռնանում էին ժողովրդի վրայ, կեղեքում-կողոպտում էին նրան եւայլն, այդպիսով զզուեցնելով ժողովրդին ե՛ւ էջմիածնից, ե՛ւ կաթողիկոսներից, ե՛ւ հոգեւորականութիւնից։ Դարձեալ անօգուտ։ Պարտքը մնում էր եւ գնալով դիզւում։ Վերջ ի վերջոյ բանը այնտեղ հասաւ, որ «կաթողիկոսքն հանապազ ի փախստեան եւ ի թաքստեան կային եւ ոչ կարէին ի միում տեղւոջ կալ աւուրս երկուս կամ երիս, եւ կամ լուսով տունջեան ի շինէս յայս ի միւս չէնն երթալ, այլ ի դիշերի երթային, եւ յոյժ ողորմելիք էին կեանք նոցա» (Դաւ. Բ. եր. 9)։

Այլ եւս չկարողանալով տոկալ այս անտանելի տառապանքներին, շատ անգամ կաթողիկոսները գլուխ էին վերցնում եւ գաղտնի փախչում՝ իրենց հոգին պարտատէրերի ձեռքից ազատելու համար։ Ստեփաննոս Սալմաստեցին փախաւ Պոլիս, Սահակ կաթողիկոսը՝ Վան՝ Մելքիսէթը՝ նախ Պոլիս, յետոյ Լեհաստան, Սրապիոնը՝ Ամիդ կամ Տիգրանակերտ եւն.։

Իսկ այդ բոլոր նեղութիւնների դիմաց, որ կաթողիկոսները քաշում էին պետութեան հարկը տալու համար, ի՞նչպէս էին վարւում նրանց հետ երկրի իշխանները։ Ահաւասիկ ձեզ մի Շահաբաս, որը դեռ եւս մէկ հեռատես եւ կարդին թագաւորի անուն ունի եւ իբր թէ բարեկամ է եղել հայերին։ Բանտարկում է մեր ամենայաւ կաթողիկոսներից մէկին, Սրապիոնին եւ պահանջում «զանձս յոլովս» — ասում է պատմագիրը։ Բայց խեղճը չկարողանալով տալ, բերում են հրապարակ եւ ... «արկին ի վտանգս չարչարանաց՝ հարուածոց եւ դանից։ եւ զպատուելին զայն այր արարեալ յոյժ անպատիւ, մինչեւ ի դռեհի ի հրապարակի կախեալ յոտից, բրածեծ առնէին զնա ուժգին՝ աւուրս յոլովս» (Դաւ. Գ. 29)։

Կամ՝ նոյն Շահաբասը հրամանագրում է Երեւանի իր խանին բռնել Մելքիսէթ կաթողիկոսին, տանջել եւ իր մօտից իրեն ուղեցնել։ Եւ հրամանը կատարւում է ամենայն դաժանութեամբ։ «Բերին զՄելքիսէթ յԵրեւանայ բերդի մէջն եւ ի վերայ դետնոյ տարածեցին զնա եւ ի չորից կողմանց քարշեալ պրկեցին զնա՝ կապեալ ի ցիցս, եւ արկին յորսայս (մէջքի վրայ։ Խ.) եւ առեալ զբեւեռաքաղս, այսինքն քալբաթին, եւ այնու կտրեցին զմիսն ծղեացն, որ է թեւերն, եւ զայն կտրեալ միսն եղին ի բերան նորին։ եւ յերկուց կողմանց կանգնեալ